Թաւրիզ. Աղ. տէր Վարդանեանց.—«Նապոլէօն և Ալէքսանդր I ցարը» յօդուածի թարգմանութիւնը ստացանք։

Վենետիկ. Պ. Նորայր Բիւզանդացուն.—Այո, աւերակ դարձաւ Շուշին, Արցախի նախկին վարթամ և հռչակաւոր մայրաքաղաքը. բարբարոս թուրքերի ձեռքով հրդեհուելով՝ մի քանի հարիւր տուն հիմնովին այրուեցան, միջի բոլոր գոյքերով. և հազարաւոր հայեր, երեկ հարուստ և ապահով, այսօր մուրացկանի դրութեան մէջ են։ Եւ դեռ շարունակուում են այդ խժդժութիւնները, միայն այժմ արդէն... ոչ թուրքերի ձեռքով։

Կարս. Բ. Թ.—Դժբաղտաբար մենք անկարող ենք ոչ մի արտատպութիւն անել մեր հաշուով. այս տարի գոհ պիտի լինին հայ թերթերը, եթէ կարողանան իրանց գլուխը պահել։

Երեւան. Կ. Արզ.—№ 6 7 ուղարկեցինք նորից։

Բազու. Աւագ Մարխանեանց. № 1 ուղարկեցինք նորից։

Շտրասսբուրգ. — Խոստուկին. — Ձեր բանաստեղծութիւնը ստացանք և կտպուի առաջիկայ համարում։

Ե. Նախիջեւան. ա. Շողուեանց. — Ձեր բանաստեղծութիւնները ստացանք. կտպենք ինչ որ կարելի է։

Շուշի. Ց. Խանլարեան.—Բանաստեղծութիւնները ստացանք։

Պ. Արշակ Զօպանեանի թարգմ. «Միրէյօն» կանոնաւոր կշարունակենք միւս համարից։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Գ. ԱՂԱՆԵԱՆՑ